ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
ՀԱՐՔ

1. ԱՐԵՎԵԼՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԻ ԵՎ ՁԱՄ-ՁԸՐԱՂԻ ՀԵՔԻԱԹ

Թագավորմ կէղնի, ուրին կնիկ կբերե. քանի կնիկ օր կբերե ախչիկ կբերին։ Ինչքան օր ախչիկ կբերին ուր կնկըտիկ, հըմ ըզկնիկ կմորթե, հըմ զախչիկն ու հըմ ըզտատմերն։

Ահուն էդ թագավորն է եռեսունինը կնիկ էրեց, հ'ըմեն լէ ախչիկ բերին, մորթեց, մնաց մեկ կնիկ օր թըմեր քառսուն։

Էդ քառսունի գլուխ էղնող կնիկ լէ պառկավ, ախչիկ բերեց։ Տատմերն խելոք էր ու լսեր էր զէդ թագավորի էրածները, հ'ախու զինք չմորթելու համար հ'ելավ գնաց թագավորին ասեց.— Քըզիկ տղեմ էղավ։

Տատմեր օր մուժտա տարավ, թագավոր զանկճկլեն տոպրակմ' փարա տվեց էդոր, ասեց.— Դըհ, դու գնա։

Ախչիկն էր, օր կլվանեն մարդու նշանց չեն իտե, չէզնի հասկընան ախչիկ է։

Քանիմ' տարի մնաց, ախչիկ բեդցավ, էղավ վարժատան։ Պապըն ասեց.— Պիտի տանիմ դնիմ վարժատուն զիմ տղեն՝ կարդա,— չգիներ ախչիկ էր, ուրին համոզած են թե՝ տղա էր ու հըմ տղեկնակ կհագներ։

Տարավ դրեց վարժատուն։

Օրըմ էդ ախչիկ էկավ տուն, մամուն ասեց.— Մարե, էդ հ'որի՞ն իմ ընկերներն օր կժռին, ուրանց ջուր թափին, հեռուն կընկնի, ես օր կժռիմ՝ կթափի վըր իմ ճվերուն։

Մամն ասեց.— Լաւ՝, դու ախչիկ իս, մենք խստու ասեր ինք տղա է, օր քու պապ ըզմզիկ չմորթե, քու պապ հ՝իսնով քառսուն կնիկ ի էրի, հ՝ըմեն լէ ախչիկ են բերած, թե՝ զախչըկներ մորթեր է, թե՝ ըզման, թե՝ զէնդոնց տատմերներ։

—Մարե,— ասեց ախչիկ,— վաղ օր ես մեսցա, ու իմ պապ կարգեց զիս, հասկցավ ես ախչիկ իմ, մրր հալ իմա՞լ կէղնի։ Մարե,— ասեց,— մատամ օր դու ընծիկ կաթ իս տվի, ես բանըմ կասիմ, դու պետք չէ քու սիրտ առնիս, ես գինամ վաղ օր հ՝իմցավ իմ պապ խերն հաղ ես ախչիկ իմ, թե՝ ըզքզիկ կմորթե, թե՝ զիս. էն օր մորթե զիս ու ըզքզիկ, պիտի առնիմ զիմ գլուխ էրթամ էրկրներ կորիմ, թե՝ դու կազատիս, թե՝ ես։

Էկավ մտավ ախոռ, սեյիսին ասեց.— Էկո զիմ պապու ձին թամքե, կհեծնիմ էրթամ օլըրտիմ։

Մշակ ավտցավ, բերեց ըզթագավորի ձին թամքեց, քաշեց դուրս, տղեն հեծավ ու գնաց։ Ման օր էկավ, հ՝ելավ էդ քաղքեն դուրս, առավ զուր գլուխ ու կորավ։

Գնաց, թե շատ, թե քիչ գնաց, հանդիպավ հ՝աղբըրիմ, հ՝իջավ հ՝աղբըրի վրեն, ձին թողեց չայիրն, ինք լէ ուրին քիչըմ հաց կերավ, խմեց ջուր, ու քիչըմ թընճկավ, ընկավ մեկ կշտին։ Օր մեկ կշտին։ ընկավ, քնավ։ Քնու մեջ էր, տեսավ ձիու հրուրփուն կիգա, ու օտաց ձեն, հ՝ելավ, հ՝ելավ ի՞նչ տեսնա աղեկ է, ձիավոր վրր ձիավորի գլուխ դրեր են ու կիգան։ Տեսավ օր էդ ձիավորներուց իրեք ձիավոր կտրան, էկան դեմ ինքվեր։

Էկան տղի մոտ, ասին,— Տղա՝, մրր ձիանք մացեր ին, չըն հասնի, հ՝ելի զքու ձին հեծի հ՝ընկի էդա ջանավըրի ետևեն, օր առեր է ըզթագավորի էրեխեն բերան, կփախնի. հասի, պալքիմ դու առնիս ձեռքեն։

Հ՝ելավ հեծավ զուր ձին, ու ընկավ էդ ջանավըրի ետև, հասավ ջանավըրին։

Ջանավար տեսավ օր ձիավոր հասավ ուրին, զփաթուքք թողեց։ Տղեն հասավ վրր խոնդրխին, վերցուց գետնեն. տեսավ օր սաղսալամաթ է։ Ձիավորտանք լէ էկան հասան։

Վերուց զէդ էրեխին տվեց ձիավորներուն, ասեց.— Դրհ, առեք ըզձեր փաթուք, գացեք։

Ձիավորտանք ասին.— Մարդ աստծո, որն օր բռներ է, պետք է էնի առնե, հ՝ընկնի մրր հ՝առջև էրթանք, տանե, թագավորեն առնե զուր բաշխիշ։

Առավ զէրեխեն ու ընկավ ձիավորտաննու հետ գնաց։ Ձիավորըմ

հ՚ըմնուց հ՚առաջ վազեց գնաց, մուժտա տարավ թագավորին, թե՝ «Խարիպ ձիավորըմ ըռաստ էկավ մզիկ, փրցուց ըզքու էրեխեն գաղանի բերնեն, առավ էկավ»։

Էդ ձիավորն է, օր առավ զէրեխեն ընկավ ձիավորտաննու հ՚առջև, հեռվանց կէրթեն։ Աստծու հրամանով էդ էրեխեն հ՚ելավ լեզու, ասեց.—Տղա՛, հանդէ կէրթաս, իմ պապ քրզիկ բաշխիշ կիտա, քզիկ օր ինչ կիտա՝ չըս առնի, մըզիկ ձիմ կա, հանդէ ջուր կբերէ մըր տան, զէնի կուզիս, ձին էն խրտար ջուր է բերի օր կուշտ ու կող լէ ծակըռտեր է, բըլե մեկ լէ էնի ըզքզիկ քու սրտի մուրազին կհասու։ Իմ պապուն քսանուին կնիկ է էղի, հ՚ըմեն մեկ մեկ տղա բերեր ին, էդ գելն էկեր է տարի, կերի։ Նուսուն կնկա գլուխ իմ մերն։ Էկավ օր զիս լէ տաներ, դու էկար ըռաստ, ազատեցիր։ Ինչ օր ուզիս, իմ պապ քրզիկ խընամիշ չէնե։

Էկան մոտեցան էդ թագավորի քաղքին. տարավ դեմ զէրեխեն թասլիմ էրեց թագավորին էդ ձիավոր։

Թագավորն ասեց.— Ասե, տղա՛, տեսնամ ինչ կհ՚ուզիս, իմ թագավորութենից զատ, ահտ ու խրատ էղնի, ի՛նչ հ՚իդա շուռ քու լեզուն, կիտամ, չէ՞ օր դու զիմ էրեխեն ազատեցիր։

Տղեն ասեց.— Ըզքու տան ջուր բերող ձին կհ՚ուզիմ իտաս։

Թագավորն ասեց.— Ջանըմ, ամոթ է էդ ձին իտամ քրզիկ, էդ ձին իրարուց փրթեր է, բան հ՚ուզե, իտամ։

Ինչ էրեց՝ տղի վրեն չկառցավ։

Ասեց.— Չէդ ձին կհ՚ուզիմ։

Թագավորն ասեց.— Մադամ օր զէն ձին հ՚ուզե, քաշեք հանեք քաղքեն դուրս, կիտաք ուրին, առնե էրթա։— Հանեց խուրճիմ լէ փարա տվեց։

Հ՚ելավ շնորհըկըլավ թագավորից, հեծավ զուր ձին, գնաց քաղքեն դուրս, հասավ ձիու քաշողին, առավ ու գնաց։ Առավ օր կէրթեր.

— Տղա՛, տղա՛, կանի բան կասիմ քզիկ,— ասեց։

Տղեն կանավ։

Ասեց.— Տղա, ես էրկու ձին ի՞նչ կէնիմ, եպոր էդա ձին էղավ, էդա իմ տկու ձին լէ թըղ էղնի քզիկ։

Զուր տկու ձին տվեց թագավորի սեյիսին, առավ գնաց։

Էն օր գնաց, հ՚ելավ հեծավ թագավորի տված ձին, ասեց. «Կանի հ՚ելնիմ, զէդա ձին հեծնիմ, տեսնամ էնտոր շնորհքն ի՞նչ է օր թագավորի էրեխեն կասեր՝ «Զիմ պապու տան ջուր բերող ձին հ՚ուզե»։

Հ'էլավ հեծավ, ըզթֆանք կախեց խարրուզեն ու քշեց։

Էնի թըղ էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք թագավորի սեյիսի ու թագավորի վրեն։

Թագավոր նստուկ էր փանճարեն, տեսավ օր սեյիս էդ տղի ձին հեծեր էր, էկավ ու տղեն լէ զուր տված ձին հեծավ գնաց ասեց՝ «Ջանըմ, էդ տղեն ըզխելքն էր կորցուցի, ծո՜ւռ էր, չըմ գինա, թե չէ, ծուռ էր օր զէդ կըռկոտ ձին ուզեց, տարավ, ուզելուց սորա հըմկա զուր ձին լէ տվեց սեյիսին, հեծավ զէն ձին գնաց»։ Թագավոր բան մը չհասկցավ։

Տղեն է, էդ ձին օր հեծավ, քիչմը տեղ գնաց, տեսավ օր էդի զուր հ'առջի թույը թողեց, ուրիշ թույըմ էկավ վրեն օր չուտիս, խմիս, իշքիս հ'ինքվեր ու հըմալ կփախնի, օր նման չկա, հ'ուր ուր հ'առջի ձին, հ'ուր էդա ձին։

Գնաց զեղիմ մոտեցավ, ասեց. «Ձի օր կա մուրատ է, զիմ ձիու գլուխ պիտի թողնիմ, հ'ուր օր կանավ, հ'ոնի պիտի հ'իջնիմ, էդա հ'իրկուն հ'ոնի մսաֆըր պիտի էղնիմ»։

Ըզձիու գլուխ թողեց, գնաց պառվում դուռ կանավ։

Պոռաց.— Ո՞ր կա ներս։

Պառավըմ քիփ բացեց զդուռ, հ'ելավ դուրս։

Ասեց.— Ի՞նչ է, օրթի։

Տղեն ասեց.— Նանե, էդա տեխ, տեխ կա՞ ես ու իմ ձին մսաֆըր էղնինք հ'ոտա էսօր։

Պառավն ասեց.— Օրթի, քզիկ տեղ կա, քու ձիուն չկա։

Բուռըմ օսկի հանեց լըցեց պառվու ձեռք ու ասեց.

— Նանե, օր ընձիկ կա, իմ ձիուն լէ կէղնի։

Պառավ մտավ ներս, ինչքան հողե ման կեր, զըմեն ջարդեց, էկավ զձին քաշեց ներս։

Քանիմ օր էդ տեխ մնաց։

Օր մը վերուց ասեց. — Նանե, զիս չէնի՞ս քզիկ տղա։

Պառավն ասեց.— Օրթի, ղաթի ես տղա չունիմ, օր դու էղնիս ընձիկ տղա, ես զիմ աչք քո՞ռ կուզիմ, հ'որի չըմ էնի, զաթի ես աստծուց զէդ կհ'ուզենք։

Էղավ պառվուն տղա, հ'ըմնօր լուսուն կելներ կէրթեր ավ ու խուշի, հ'իրկուն կդառներ հ'իգեր։ Օր մը չէ, էրկու չէ, օր մը լէ դառձավ էկավ թագավորի սարի հ'առջևեն կընցներ, տեսավ օր էդ սարից դուրս բանմ կփելքտա. շաշ ու մաթ մնաց։ Ինքն ուրին ասեց. «Ջանըմ, էդա ի՞նչ պիտի էղնի»։

Դառձավ էկավ տուն, պառվուց հարցուց.— Նանե, էդա ի՞նչ է օր թագավորի սարի հ'առջև փելք կիտա։

Պառավն ասեց.— Լաո՛, էդի թագավորի ախչիկ կիզփաթն է։

Տղեն վերուց պառվուն ասեց.— Նանե, խուրպան էղնիմ քզիկ, էրթաս հ'ուզիս, զէդի չըն իտա՞ ընձիկ։

Պառավն ասեց.— Լաո՛, ես էդա շորերով իմա՞լ էրթամ կանիմ թագավորի հ'առեջ, ամոթ չէ՞։

Տղեն ասեց.— Օր գինամ կէրթաս կհ'ուզիս, քոռ օլսըն յոխ-սըզլուղ[1], փարա չկա՞, կէրթամ լուսուն ձեռքըմ հալավ կբերիմ, քզիկ հագնիս, օր թագավորի կնկա վրեն լէ չէղնի, գնա հ'ուզե բի։

Լուսուն օր էղավ, հ'ելավ գնաց ձեռքըմ հալավ բերեց, օր զարկեր՝ փետի պես կկաներ, հ'ըմեն օսկի ու արծաթ, տվեց պառվուն։ Պառավն հագավ շորեր, գնաց թագավորի քուռսու վրեն նստավ։

Թագավորն օր տեսավ ղսլառավ, վերուց ասեց.— Նանե, հ'որի՞ն ես էկի, ի՞նչ դարդ ունիս։

Պառավն ասեց.— Թագավոր ողջ մնա, իմ աղիս այից ընձիկ դադար չկա, ես էկեր իմ խնամութենի համար. էկեր իմ, օր զքու ախչիկ Կյուլփարին իտաս իմ տղին։

Թագավորն ասեց.— Նանե, քզիկ տղա կա՞։

Պառավն ասեց.— Թագավոր ապրած ողջ մնա, ընձիկ տղեմ կա, արարած աշխըրքի մեջ հըմալ տղա չկա։

Թագավորն ասեց.— Ինչ կա, ես զիմ ախչիկ կիտամ քու տըղին, բայց շարդով կիտամ, առանց շարդի չըմ իտա։ Իմ շարդն էդա է՝ լուսուն հ'ելնի քու տղեն հեծնի զուր ձին, հանդե կպրե գետ կիգա կընցնի, թռնի ուր ձիով հ'ընցնի զգետ էնդին, մեկ լէ հ'ընցնի էդա դին, սորա կիտամ զիմ ախչիկ, թե օր չընցավ՝ զքու գլուխ լէ կզարկիմ, զքու տղին լէ։

Պառավն լաց ու էդ տեխեն հ'ելավ էկավ։ Էկավ օր տղեն դրռ նստուկ էր տուն։

Ասեց.— Թագավոր հըմլա կասե. «Քու տղեն օր ուր ձիով թռնի հ'ընցնի զկպրե գետ էն դին, էն դիեն լէ էդա դին, սորա կիտամ զիմ ախչիկ, թը չէ՝ զքու գլուխ լէ կղարկիմ, քու տղին լէ»։

Էդ օր հըմալ ասեց, տղեն լէ մառախոտավ, գնաց ձիու մսուր նստավ։ «Ես ախչիկմ ենք, հեյ վախ, էդ ի՞նչ բան էր-էրի իմ գլուխ»։

Օր լաց, ձին հ'ելավ աստծու հրամանքով լեզու, ասեց.— Հեյ տղա, քզիկ ի՞նչ ձեռք տվեց օր կիլաս ու մառախոտեր իս։

Տղեն վերուց ասեց.— Ես ճամբեր իմ զիմ մեր հ'ուզի զթագավորի ախչիկ ընձիկ։ Թագավորն ասեր է, օր՝ «Քու տղեն զկպրե

---

1 Թող կուրանա աղքատությունը (Ս. Կ.)։

2—1086

գետ հ'ընցնի, կիտամ զիմ ախչիկ, օր չընցնի զգլուխ կզարկիմ». էդ կպրե գետ ի՞նչ է, չըմ դինա։

Ձին ասեց.— Գնա քիչըմ առվուտ ըի, ես ուտիմ, զիս աղեկ մը լէ թիմրե, հ'ելի իմ միջաց, էլ դու լախա չունիս, էդ գետ օր կասեն կուպր կիգա, հ'ըմեն մարդ չկռնա հ'ընցնի, դառնա. որն օր հ'ընցնի, կզըքի մնա մեջ, ըլլե դու օր հ'ելար զիս հեծար, հանդե կըշիս էրթաս գետի պռուկ, կկանչիս ըզթագավոր մեջլիսներ, կհանիս դուրս օր տեսնան դու ըզգետ կընցնիս, շահատ էղնին։ Ջըրինտ կխաղաս կէրթաս, հանդե իմ անկըշվընեռու վրեն իրեք պտղունց քրտինք կիգա, օր տվեց, կզարկիս ջուխտմ զանգու, կթռնիմ հ'ընցնիմ գետի էն դին, հոնկուց լէ կթռնիմ հ'ընցնիմ էդա դին։

Տղեն գնաց ձիու ասածի պես, կանչեց զթագավորի օնիքիլարներ, հանեց դուրս։

Ջըրինտմ էրկու գնաց էկավ, տեսավ օր իրեք պտղունց քրտինք կանավ ձիու անկըշվընեռու վրեն։ Զանգուն զարկեց, ձին թռավ հ'ընցավ էնդին, հոնկուց լէ թռավ հ'ընցավ էդա դին։

Քշեց զձին, էկավ պառվու դուռ հ'իշավ, քաշեց ներս, կապեց։

Պառավն ասեց.— Լաո՛, դու փրցար էկա՞ր։

Տղեն ասեց.— Հա՛, նանե՛, փրցա, էկա։

Պառավն մեկ լէ հ'ելավ գնաց նստավ թագավորի քուռսուն հ'ուզընկան։

Թագավորն հասկցավ օր ախչիկն հ'ապով է էկի, ասեց.— Պառա՛վ, ես տեսա քու տղեն թռավ զկպրե գետ հ'ընցավ էն դին, հոնկուց լէ՝ էդա դին։ Քզիկ շարդմ ըէ կդնիմ, քու տղի հ'առջև, ձմերուկըմ կդնիմ մըր քաղքի բերդի մընարի վրեն, թե օր քու տղեն ջըրինտ խաղնալով էկավ զարկեց բերեց ցած, զիմ ախչիկ կիտամ քու տղին, թը չէ՝ ըզքու գլուխ լէ կկտրիմ, քու տղին լէ։

Մեկ լէ պառավ սեավորավ, էկավ նստավ, ասեց տղին.— Թագավոր էդա հըմլա կասե. «Ձմերուկ կհանիմ դնիմ բերդի մընարի վրեն, թե օր քու տղեն կառցավ ջըրընդով քշե էն տեխ, զարկե բերե ցած, զիմ ախչիկ կիտամ, թը չէ, ըզգլուխ կզարկիմ»։

Տղեն մեկ լէ խաչբնդավ, գնաց ձիու մսուր, նստավ։ Ձին տեսավ օր տղեն խաչբնդեր է, հասկցավ բանըմ կա, հարցուց, ասեց.— Տղա՛, էմ լէ ի՞նչ է էդի քզիկ, խաչբնդվեր իս, նստի։

Տղեն ասեց.— Էլ ի՞նչ էղնի, ճամբեցի զիմ մեր թագավորի ախչիկն հ'ուզեցի, հ'ընկա բալա. հըմկա լէ ասեր է. «Ձմերուկըմ կդնիմ բերդի մընարի ծերու վրեն, թե օր քու տղեն ջըրընդով կառցավ հ'ելավ հ'ոնի, զարկեց բերեց ցած, կիտամ զիմ ախչիկ, թե չէ՝ զգլուխ կզարկիմ»։

Զին ասեց.— Մառախ մ'էնի, ընձիկ քիչըմ առվուտ տուր ուտիմ, աղեկըմ թիմբե ու հեծի, գնա թագավորի սարի դուռ կանի, կանչե թագավորի օնիքիլար հ'ելնին դուրս, գնա քանիմ հեղ էկո, իմալ էրեկ էրիր, հանդե իրեք պտղունց քրտինք կիտա իմ անկըշվընեռու մեջ, զարկ զանկուն, ես կթռնիմ հ'ոնի, նշան զարկել կմնա քու հունար։

Զիու ասածի պես տղեն խուրձ մը առվուտ բերեց, թալեց ձիու հ'առջև, աղեկըմ թիմբեց ու լուսուն հ'ելավ հեծավ. հեծավ. գնաց կանավ թագավորի դռան հ'առեջ, կանչեց թագավորի օնիքիլար, հանեց դուրս, գնաց, քանիմ հեղ էկավ, զանկուն օր զարկեց, ձին թռավ, մընարի ծերուց օր կընցներ, տղեն զարկեց զձմերուկ բերեց ցած։

Քշեց էկավ պառվու դուռ հ'իշավ, տարավ զձին կապեց, էկավ պառվուն ասեց.— Նանե, հ'ելի գնա էդ թագավորի մոտ, տեսնանք ի՞նչ կասե։

Պառավ հ'ելավ, մեկ լէ գնաց թագավորի քուռսու վրեն նըստավ։

Թագավոր ասեց.— Պառավ, քու տղեն զիմ էրկու շարդն կատարեց, մնաց մեկ շարդ, թե օր զէն լէ կատարե, զիմ ախչիկ կիտամ, թե օր չկատարե, կղարկիմ զքու գլուխ, քու տղին լէ քու հետ։ Էդ շարդ լէ էդա է՝ քու տղեն գուլաշ պետք է կպնի իմ փեհլիվանի հետ. թե օր զառկեց զիմ փեհլիվան գետին, զաթի կիտամ զիմ ախչիկ, առնիս էրթաս, թե չէ, զձեր գլուխ կղարկիմ։

Պառավ սևսրտավ, հ'ելավ էկավ։

Տղեն օր տեսավ զպառվու քիթ ու մռութ, ինքն լէ ըզմատեն էրեց, հարցուց, ասեց.— Նանե՛, ի՞նչ կասե։

— Լաո՛, ի՞նչ կասե, կասե՝ «Քու տղեն զիմ էրկու շարդ կատարեց, մնաց մեկ շարդ, գուլաշ կպի իմ փեհլիվանի հետ, օր զարկեց գետին զիմ փեհլիվան, զախչիկ կիտամ տար, թը չէ, կղարկիմ զքու գլուխ, տղին լէ հետ»։

Տղեն ասեց. «Հա՛յ վախ, էդ ի՞նչ էր բերիր իմ գլուխ, ես ախչիկմ եմ, իմ հալի հետ հըմլա բաներուց ընձիկ ի՞նչ գործ կեր, հար հըմկա ինչ օր էրի՝ ձիու հունարն էր, հըմկա բերեց թալեց իմ վիզ. ես ի՞նչ հող քաշիմ վըր իմ արևուն»։

Հ'ելավ մեկ լէ գնաց ձիու մսուր, ըզմատեն էրեց ու նստավ լաց։

Զին տեսավ զտղի նիաթն ու արտասունք։

Ասեց.— Հե՛յ տղա՛, քզիկ ի՞նչ է էղի, օր հըմլա մառախոտեր ես, կիլաս։

Տղեն վերուց ասեց.— Էլ ի՞նչ էղնի, խոսքմ էր ասինք, չասինք հ՚ընկանք բալի մեջ, հ՚ելա զէդա էրկրի թագավորի ախչիկ հ՚ուզի կնիկ, էլ չըմ կռնա յախա ազատի, հար հըմկա լէ ինչ օր էրի, քու պառեկովն էր, հըմկա բերին թալին իմ վիզ։ Թագավորն ասեր է իմ մամուն՝ «Թըղ իմ փեհլիվանի հետ գուլաշ կպի, օր զարկեց գետին զիմ փեհլիվան, զախչիկ կիտամ առ գնա, թը չէ, կկտրիմ զքու դըլուխ, տղին լէ վրենն»։

Ձին տղին ասեց.— Հ՚ելի պառկի իմ մըսուր։

Տղեն հ՚ելավ մտավ ձիու մսուր ու աղեկըմ էրկընցավ։

Լիզեց զտղեն, էրեց պաղի նման. Ասեց.— Հըմկա հ՚ելի գնա. կելնիս, լուսուն կէրթաս թագավորին կասիս՝ «Հ՚ուր ին քու օնիքիլար, թըղ հ՚իգան դուրս, իշքին». հանդէ փեհլիվան լէ կիգա կանի էն տեխ, դու կասիս. «Որ մեկ մեծ շուն է թըղ հ՚իգա»։ Էն օր զէդ խոսք լսեց, քրպուն կպատռի, կասե՝ «Գետին պատռի, մտնամ մէջ»։ Կիգա, ձեռք կթալի քի, դու էղեր ես պղի նման, հ՚ուր օր թալե՝ կիստա, ձեռք չբռնե զքզիկ, էնի կհըֆթրի մնա, դու ձեռք կթալիս, վերցուս դնիս գետին ու զդանակ քաշիս չոքիս վըր սրտին. կասիս. «Ըզքզիկ կսպանենք, բըլե տվի իմ աներոջ խադրը»։

Տղեն, ձիու ասածի պես, լուսուն շուտ հ՚ելավ գնաց թագավորի դուռ, տեսավ օր փեհլիվան էկեր է կանի, չոքըմ խուշքի բերեր ին լըցի էդոր օտներու տակ։ Ծանտր էր, գետին չբռներ զօտներ։ Կանչեց հանեց ղօնիքիլար դուրս, ու էկան իրար, ինչքան թագավորի փեհլիվան ձեռք թալեց, փստաց, չառավ հըֆթ ըրավ մնաց։

Տղեն տեսավ օր փեհլիվանի նաֆաս կտրավ, լըքմեմ զարկնց տզի սիրտ, ու վերցուց դրեց գետին, չոքավ վըր սրտին, քաշեց զդանակ ասեց.— Զքզիկ կսպանենք, բայց տվի իմ աներոջ խադրը։

Գուլըշից օր փրթան, տղեն հ՚ելավ էկավ տուն։ Ասեց պառվուն.

— Հ՚ելի գնա, տեսնանք ըստհաղ ի՞նչ կասե թագավոր։

Պառավն հ՚ելավ գնաց, նստավ թագավորի քուռսու վրեն։

Թագավորն վերուց ասեց պառվուն.— Էլ ասելիք չունիմ, հ՚ելի գնա, զքու թադարուկ տես, վաղ բռնինք ըզհարսնիք։

Պառավն հ՚ելավ գնաց զուր թատարուկ տեսան, օլոր օր բըռնեցին ըզհարսնիք, յոթն օր, յոթն գիշեր զարկին խաղցան, պսակեցին, փրթան աղատան։

Ծրբ ըզհարսն բերին տուն ու ըզնուրց կտրեցին մեկ տեղելու գիշեր, էն դառցուց զուր հ՚... էնդոր դին, էն էնդոր դին, մեջք միջաց զարկին ու պառկան քնան, չունքի էն ախչիկ էր, էն ախչիկ։ Օր քընան, հ՚ելան առավոտ։

Թաղավորի ախչիկն ասեց՝ «Հ'էսօր հրմլա թըղ հ'ընցնի»։

Մեկել օր լէ քնան հրմալ։ Լուսուն օր հ'ելան, թագավորի ախչիկն ասեց. «Կարելի է էդ տղեն ընձիկ չհավնի, օր չի գա իմ մոտ, իմ պապն օր իտա զիս պառվու տղին, հալպաթ իմ հալ լէ հրմլա կէղնի»։ Լուսուն հ'ելավ հրմալ կտռտուկ շոր հագավ, օր կարկտանըմ քաշիս, հազար լէ հետ կիգա։ Ջուր վրավու բոլոր խաս հալվըներ հանեց, թափեց։

Էդ օր լէ թագավորի կնիկն ասեց ուր պեսլամին.— Հ'ելի էսօր գնա, տես մըր ախչիկ քեֆո՞վ է, իմա՞լ է։

Ջառեն էկավ տեսավ օր, ախչիկ հրմալ քրոչ անթարեմ է հագի, օր աստված ինք նշանց չի տա, էթըմու շոր մաներ։

Ասեց ջառեն թագավորի ախչկան.— Ախչի՛, լաո՛, քզիկ ի՞նչ է ձեռք տվի, էդ ի՞նչ շոր է քու վրեն։

Ախչիկն ասեց.— Էլ ի՞նչ ձեռք իտա, իմ պապ հ'ելավ տվեց զիս էդա պառվու տղին, հրմկա լէ ընձիկ չհավնի, իմ հետ չխոսա։ Գնա իմ մամուն ասե։

Ջառեն գնաց, ինչ օր ախչիկն ասեր էր, պատմեց թագավորի կնկան։ Թագավորի կնիկն է հ'ելավ դրեց ուր էրկա անկաջ թե.— Մարդ, մըր ախչիկն օր տվեր իս էդա տղին, չհավնի քնի մըր ախչրկա ծոծք։ Մենք ու մեկուճար ախչիկմ ենք, հ'ելար տվիր պառվու տղին, հ'որի՞ չպիտի հավնի մըր ախչկան, օր չ'հավնի, բի ըզգլուխ զարկ։

Թագավոր կանչեց ըզտղեն բերեց, ասեց.— Հա՛յ տղա, օր դու իմ ախչկան չըր հավներ, ավալկընե չառնեիր, հ'որի չըս էրթա պառկի իմ ախչկա մոտ։ Օր իմ ախչկա մոտ չէրթաս պառկիս, ըզքու գլուխ կզարկիմ։

Տղեն տեսավ էլ ուրիշ ճար չկեր, ինք ախչիկ էր, ի՞նչ պիտի ասեր։

Ասեց.— Թագավոր ապրած, հար դու հրաման չիտաս, ես իմա՞լ էրթամ պառկիմ քու ախչկա մոտ։

Օնիքիլար օր լսեց զտղի ասածները, ասեց.— Էհ, քզիկ ու քու կաթին, օր հրմալ ա, հալալ կաթ իս կերի, աղեկ լէ ղու էրիր։

Թագավոր բանըմ չասեց, տղեն հ'ելավ, թողեց էկավ տուն։

Էն լէ, էն իրիկուն տեխորթալին, օլըրտեց պառեկ կնիկվեր. պառկավ քնավ, էրկու օր, իրեք օր հ'ընցավ։ Էմ լէ թագավորի կնիկ ճամբեց զջառեն, ասեց.

— Գնա, տեսնանք ախչիկն իմա՞լ է։

Ջառեն էկավ, տեսավ օր ախչիկն էմ լէ հագեր զէն շորեր, օր մեկ կտոր քաշիս, հազար կթափի։

Ջառեն հարցուց, ասեց.— Ախչի, քզիկ ի՞նչ է ձեռք տվի օր հրմլա կհագնիս։

Ախչիկն ասեց.— Էլ ի՞նչ ձեռք իտա, ընձիկ չհավնի, իմ հետ չապրե[1], գնա իմ մոր ասե, տեսնանք ի՞նչ կասե։

Ջառեն գնաց, թագավորի կնկան ասեց։

Թագավորի կնիկ լէ հ՚ելավ իրկան ասեց թե.— Քու փեսեն մեկ լէ չհավներ է պառկի քու ախչկա մոտ, ի՞նչ կասիս։

Թագավոր հ՚ելավ լուսուն, կանչեց զուր ըռճաքուպարները բերեց ասեց.— Էկեք տեսնանք ի՞նչ կասեք, էդա տղեն իմ ախչկան չհավնի, զէդոր գլուխ զարկի՞նք, թը՞ չզարկինք։

Ըռճաքուպարները ասին.— Թագավոր ապրած կենա, մենք քու օտաց փոշին ինք, մենք հ՚եվել է քու հ՚առջև խոսալ, պըլե կխոսանք։ Էդա տղեն ափսոս տղա է, էկո մըր հ՚առջե զէդոր գլուխ մը զարկի, ճամբե թըղ էրթա անվերիմ տարու գլուխ, բելքի շուն-ջանավար ըռաստ հ՚իգան, ուտին փրցնինք ազատինք։

Կանչեց զտղեն բերեց, թագավորն էլ բան չասեց, ասեց.

— Տղա՛, դու պետք ա էրթաս Գունտուզու սար, էնտեխ յոթ հատ ձի կա, կէրթաս բռնիս, առնիս գաս։

Տղեն բանե խապար չուներ։ Հ՚ելավ թագավորի դիվնեն, խաչկըբռավ ու գնաց ձիու մըսուր նստավ, ասեց. «Ես գինամ օր էդա ախչկա համար է կէնին գէդի իմ գլուխ, ես իմա՞լ էնիմ օր փրցնիմ էղոնցնեն»։

Ձին հ՚ելավ զրուցք, ասեց.— Հա՛յ տղա, ի՞նչ է պատահի մեկ լէ քզիկ։

Ասեց.— Ի՞նչ պատահի, իմ վրեն դրեր ին. «Կէրթաս Գունտուզու սար, էնտեխ յոթ ձի կա, կրոնիս, առնիս դաս»։

— Հը՞ն, ես գինամ ախըր բանըմ էղեր է, սիրտ ուրանց չար է, օր հրմալ ասեր են, Գունտուզու սար ես գինամ հ՚ուր է։ Էն ձիանք իմ քուրվըդիք ու մերն ին, իսան օլան օր տեսնան, հ՚իրարուց կըտոր, կտոր կէնին. ըզքզիկ մախսուս կճամբին, օր էլ չդառնաս հ՚իգաս։ Օր հրմալ է,— ասեց ձին,— կէրթաս թագավորից իրեք խիտր աղ կուզիս, իրեք չորս խիտր բուրդ, չորս հինգ դումշու կաշի, չորս խիտր լէ գինի, կառնիս կիգաս, աստված օղորմած է։

Գնաց թագավորի մոտ, ասեց.— Ընձիկ իրեք խիտր աղ, իրեք-չորս խիտր բուրդ, չորս-հինգ դումշու կաշի, չորս խիտր գինի տուր, էրթամ Գունտուզու սար, զէդ ձիանք բերիմ։

---

1 Բն. չխապրե (Ս. Կ.)։

Քոռ օլսրն յոխսրզլուղ. թագավորի մոտ է՞դ էր զոր, ասեց.—
— Թրդ էրթա, իմ էրեսեն ու իմ ախչկան հեռենա, ի՞նչ կուզե, կի-
տամ։

Հ՚ուզած բաներն առավ էկավ ձիու մոտ։ Հեծավ զձին, զէդ բաներ լէ թալեց ձիու վրեն ու գացին։ Գացին Գունտուզու սար. օր հասան էդ տեխ հ՚ախբուրմ կեր, էդ ձիանք հ՚ըմնօր կիգեն վրը էդ հ՚աղբրին կխմեն ու կդառնեն էրթեն։

Եր օր հասան էդ հ՚աղբրի վրեն, ձին ասեց տղին.— Էդա բուրդ հըմալ կըարկիս էդա հ՚աղբրի ակ, կցամքցուս օր կաթ ջուր գետին չընկնի։

Եր օր հ՚աղբուրն կալուցնել տվեց, ասեց.— Հ՚ելի զէդա աղեր ցանե էդա չայիրներու մեջ, օր հ՚իգան արածեն՝ ծառվնան։

Տղեն զէն լէ էրեց։

Ասեց ձին.— Հ՚ելի զէդա գինին լէ լից գոներու մեջ, էնդոնք հանդե կարծին։ Կծառվնան, կիզան էդ գոներու վրեն օր ջուր խըմեն։ Էդա կաշին լէ խայիմըմ կապե վրը ընձիկ ու դու գնա պատըվտի։ Էնդոնք կիգան կարծեն էդ չայիրի մեջ, կծառվնան, կիգան օր ջուր խմեն, կտեսնան զիս, կթողին գինին, կդառնան լարին իմ հ՚ետև։ Ես հալվորցեր իմ, չըմ կոնա փախնի էնդոնց հ՚առջևեն, էն վախտ օր կհասնին զարկեն պալքեմ կաշուն զարկին, հար մեկ մեկ կաշի տանին, ես կփրցում հ՚ընկնիմ մըր հողու մեջ. էլ մըր հողու մեջ մարդու հ՚ետև չըն լարի, ուրանց հողեն դուրս չըն հ՚ելնի։

Տղեն ձիու ասածի պես էրեց, բերեց զհ՚աղբուրն աղեկըմ կալուց, ըղաղ ցանեց չայիրի մեջ, դինին լցեց գոներու մեջ, կապեց զգումշու կաշիք վրը ձիուն ու ինք գնաց տեղ մը պատվտավ։ Կեսօր էղեր էր, տեսավ ձիանք էկան, քանիմ բերան արծին էդ չայիրի մեջ, ծառվցան, դարձան օր վրը գոան ջուր խմեն, աչք ուրանց առավ տղի ձին, թողին զջուրն հ՚ընկան ձիու հ՚ետև ու ձին փախավ։ Հար հ՚ուր կփախնի, չըմ դինա, մեկ լէ իշքեց տղեն, օր ձիանք դարձան էկան։

Էկան վրը գոան օր ջուր խմեն։

Ձին ասեց.— Հանդե գիկան վրը գոան ջուր կխմեն. էն մեծն էնդոնց մերն է, կխմե գինի սարխոշնա, գողտուրիկ զթամք կզարկիս վրեն, կհ՚ելնիս հեծնիս, ձին կասե. «Տղա հիջի իմ վրավեն, հըմկա ըզքզիկ կհանիմ բալբալեկուն կրակի մեջ կվառիմ»։ Դու ասե. «Ես քու փորու տակն իմ»։ Հանդե էնի կասի՝ «Տղա, քզիկ կասիմ հ՚իջի իմ վրավեն, հըմկա ըզքզիկ կհ՚իջում յոթ գազ գետնի

մեջ», դու ասե՝ «Ես քու պառեկին իմ»․ իրեք հեղ օր հըմալ ասիրէնի կխելոքանա, կհեծնիս ու կիգաս, քուռկներ լէ կիգան ետև։

Տղեն տեսավ օր էկան վըր գռան խմեցին, աչքեր ուրանց աղեկըմ Բռավ ուրանց գլխու գագաթ, հասկըցավ սարխոշցեր ին, միամըտցուց, ըղԹամք դրեց վըր պառեկին ու հ՚ելավ հեծավ։

Ջին ասեց․— Տղա՛, հ՚իջի իմ վրավեն, հըմկա ըղքղիկ կհանիմ աստծու բալրալեկում կրակի հ՚առջև կվառիմ։

Տղեն ասեց․— Ես քու փորու տակն իմ։

Ասեց․— Տղա՛, հ՚իջի իմ վրավեն, հըմկա կհ՚իջում գետնի տակ։

Տղեն ասեց․ —Ես քու պառեկի վրեն իմ։

Իրեք հեղ օր հըմալ ասեց, խելացվորավ։ Տղեն հեծավ զձին, քուռկներ տվին հ՚ետևեն, քշեց էկավ։

Ճամբու հետ ինչ․ ըռընճպար, լծքվոր օր էկավ ըռաստ, էդ քուռկներ բռնին ու կտոր-կտոր էրին, Թալին գետին։

Ջուապ գնաց Թագավորին Թե՝ «Քու փեսեն էկավ, յոԹ ձի լէ հետ, ինչ մարդ ճամբու հետ ըռաստ էկավ ուրին, էդ քուռկըներ ձևըռտեցին, Թալին ցած»։

Թագավորն ասեց․— Ես հ՚ո՞ւր մտնիմ, էդի ընձիկ համար էկավ, ես ճամբի օր չդառներ, դառձավ ու գեշ դառձավ։

Էկավ Թագավորի դուռ հ՚իջավ, զձիանք էրեց Թաղավորի հ՚ախոռ, սեյիս մը լէ բռնեց դրեց ձիաներու հ՚առջև, որ զձիանը պահեր, ինք լէ Թողեց էկավ պառվու տուն։

Հ՚իրիկուն էմ լէ Թալին տեխ, կնկա խեչ չպառկավ, գնաց ուրիշ տեխըմ էձգեց ուրին պառկավ։

Լուսուն հ՚ելավ մեկ լէ Թագավորի ախչիկ հագավ ղքռչ շորեր, կանավ տախտի մեջ։

Թաղավորի կնիկ, էրկու իրեք օր մնաց, ճամբեց ղչառեն, ասեց․— Գնա, տես իմա՞լ էղավ, ախչկա խեչ գացե՞ր է էդ տղեն, չգացե՞ր է։

Ջառեն էկավ տեսավ Թագավորի ախչիկ մեկ լէ հագեր է զուր քռչլոզ հալվըներ, կանի տախտի մեջ։

Ասեց․— Ախչիկ, քըզիկ ի՞նչ է խավմի։

Ախչիկն ասեց․— Ջըս դինա՞ զիմ դարդ, օր կհարցուս․ չհավնի պառկի իմ խեչ։

Ջառեն դարձավ գնաց Թագավորի կնկան ասեց․— Քու ախչիկ էմ լէ էն հալի մեջն է, հագեր է ըզքռչեր, կաներ է տախտի մեջ, քու փեսեն չհավնի պառկի խեչ։

Էդ օր հըմալ ասեց, Թագավորի կնիկ լալման գնաց, զինք Թալեց վըր իրկա օտաց։

Ասեց.— Էղնի էսօր, չէղնի էսօր, հար ե՞ր քու փեսեն իմ ախշրկան չհավնի, ի՞նչ խսուր կա իմ ախշկան, էսօր յամ (կամ) զէնի կխեղդիս, յամ ես կխեղդվիմ ազատիմ։

Թագավորի կնիկ օր հըմալ ասեց, թագավոր ասեց.— Բերնք զէղոր գլուխ զարկինք։

Ըռճաքուալարները կանան օտքի, յալվարմիշ էղան.— Թագավոր ապրած, ափսոս է էդ տղեն, ղէդոր գլուխ մը ղարկի, մըր մեջ հըմալ բաբա իկիթ մը չկա, օր մը մըզիկ պետք կիգա, էլ չենք կըռնա գտնա, կփոշեմնինք, բերինք լէ, կարելի է մենք ուր վրեն չկառնանք։ Տես, հըմալ տեխ ճամբիր, օր մարդ ուր օտոք, օձն ուր պորտոք չէր էրթեր, գնաց դարձավ էկավ, դու միշքի օր խոհնար է քըզիկ. քու սիրտ հ'ելեր է, զարար չկա, կէղնի էկեք ճամբենք էրթա հըմալ էրկիրըմ օր էլ չդառնա հ'իգա։

Թագավորն չկոտրեց ուր ըռճաքուպարներու խոսք, կանչեց, բերեց ղտղեն, ասեց.

— Հա՛յ տղա, ըզքզիկ կճամբիմ էրթաս Սև սար, էն տեխ Զամ չըրաղ կա, էրթաս, առնիս հ'իգաս։

Թագավորն է, որ ասեց տղին «էրթաս Զամչրաղ բերես», տըղեն հասկցավ մեկ լէ, օր ախշկա հ'ապով է թագավոր զինք էս դին կղվրոցու, էն դին կզրվոցու։ Մոթավ ու էկավ ձիու մըսուր նստավ ու լաց։

Զին տեսավ օր տղեն մոթեր է ու նստեր է կիլա, հարցուց, ասեց.

— Տղա՛, ի՞նչ է էղի քզիկ։

— Ի՞նչ էղնի, ախշիկըմ հ'ուզինք թագավորից հ'ընկանք բալա, հըմկա լէ դրեր է իմ վրեն՝ «կէրթաս Սև սար Զամչրաղ կա, կառնիս հ'իգաս». ես ի՞նչ գինամ Սև սար հ'ուր է։

Զին ասեց. —Տղա, ես հալվորցեր եմ, էլ չըմ կռնա էրթա, գնա իմ պզտիկ քուրն հ'ուզե թագավորից, հեծի գնա, հանդե էնի ճամբու հետ կսորվցու թե իմալ պետք է բերես. կառնիս Զամչրաղ կիգաս։

Գնաց աներոջ մոտեն հ'ուզեց։

Աներ ըսավ.— էդ ձին լէ թըղ էղնի քզիկ, -ընձիկ պետք չէ, դրհ ա՛ռ գնա։

Տղեն ըզձին օր բերեց, աղեկըմ թիմրեց, ըզթամք զարկեց վրեն ու հեծավ քշեց։ Հեծավ օր քշեց, հ'ելավ քաղքեն դուրս։

Զին ասեց տղին.— Զամչրաղ դինա՞ս ինչ է, Զամչրաղ էն վիշապի աչքն է, Սև սար լէ օր կասին, էն վիշապի ջանդակն է։ Էդա

մը հողեն փրցանք, յոթ օր էնդոր հողու մեջ կէրթանք. հանդէ էնի կքնի, քնուկ տեղ կէրթաս, կհանիս զքու դանակ, կղարկիս զէնդոր աչք կհանիս, զաթի ուրին մեկ աչք կա, կթալիս քու ճեպ, կիդաս զիս շուտ կհեծնիս ու փախնինք։ Փախնինք քանի չիմցեր է, էնդոր հողի միջեն հ'ելնանք, օր չկոցանք հ'ելանք, կիմնա, ըղմըզիկ կքաշե տանե ուր բերան։ Էնդոր հողու միջեն օր հ'ելանք, էլ մըզիկ բան չդա։

Էկան օր էնդոր հողու միջեն կելնեն, Ջամշրաղն քնուց հ'ելավ, հասկցավ օր մարդ էկեր է զՋամշրաղն է տարի, քաշեց օր կըլուցներ ըղմզըկ, բարին աստոծմե իմ էրկու օտք հ'ընկավ մը հողի վրեն, էլ չկոցավ քաշեր ուր բերնըվեր, փրցանք ազատանք։

— Դը հըմկա մզիկ բան չկանա էնե, իջի էդա հ'աղբրի վրեն ջուր խմե, քիչմ քնի, ես լէ արծիմ, հ'ելի հեծի էրթանք։

Տղեն պառկավ քնավ. էնի թըղ քնի, մենք դառնանք վըր վիշապին։

Վիշապն օր հ'իմցավ, տեսավ զուր աչք հանող, չկառցավ բըռնեց, վերուց ասեց.

— Որն օր զիմ աչք հաներ է, տարի, թե օր տղա է՝ դառնա ախչիկ, թե օր ախչիկ է՝ դառնա տղա։

Տղեն ուր քնուց օր հ'իմցավ, գնաց դուրս կհելներ ջուր թափելու համար, իշեց ճուճըմ կցուկ ուր հ'աւեջ, ասեց. «Յա, էդա ի՞նչ բան է. փա՜ռք աստծու, ազատա թագավորի ախչկա, թագավորի կնկա ու թագավորի ձեռքեն, զաթի թագավորի ախչկա ուզած լէ էգ էր»։ Շնորհակալ էղավ աստծուց, հ'ելավ զուր ձին հեծավ ու քշեց, էկավ դեմ թագավորի դուռ հ'իջավ։

Թագավոր մաթ էղավ, մնաց.— Ջանըմ,— ասեց,— էդ ի՞նչ ածդահեր մարդ է, հ'ուր օր կճամբենք՝ կդառնա կիդա։

Բերեց զՋամշրաղն թալեց թագավորի տուն, ու ինք չ'կանավ, թողեց էկավ պառվու տուն։

Ասեց.— Հար ե՞ր դու զիս օլըրցուս սարեր ու ձորեր, քու ախչկա հ'ապով ընձիկ ինչ օր պետքն էր՝ գտա, գնա, Ջամշրաղ թըղ էղնի քզիկ։

Էկավ, պառավ տուն չէր, ախչիկ մինակ էր, բռնեց զախչիկ թալեց գետին ու հելավ...

Ախչիկ օր ուր սրտի մուրազին հասավ, հ'ելավ ըղվրավու քուչեր հանեց, թալեց, ձեռքըմ շոր հագավ ,օր աշխըրքի մեջ չկեր, զաշքերն աղեկ դեղջրեց, էկավ կանավ տղի հ'աւեջ ու կճըճըլցու զինք։

Պառավ օր դրսուց էկավ տեսավ հարսն հաներ զուր վրավու

քուչեր թափի, աղեկ ձեռքում շոր հագեր է, նման իսկի չկա, աչքեր գեղջրեր է, շաշ էղավ մնաց, ասեց՝ «Աճայեպ ի՞նչ է էղի, էսօր էդի քոքվորեր է, աղեն է գացի խեչ»։

Գիշեր օր թալին տեխ պառկան քնան, տղեն գնաց ախչկա խեչ պառկավ։

Լուսուն հ՚ելան, պառավ տեսավ օր ախչիկ շուտ հ՚ելավ քնուց, լակյան իպրրխ հազրը էրեց, տղեն ղարթավ, հասավ հալավ բրոնեց հագուց, էկավ ջուր լցեց ձեռք լվացվավ, փեճկիր թալեց վրը ձեռաց, խրղմաթմ կէնե, աստված ինք հեռու արասցե։

Մեկ լէ մտաց մեջ ասեց. «Ջանըմ, էդ ի՞նչ է էղի, հար էսօր էտոնք հ՚իրարու հետ չխոսեն, հ՚էսօր ի՞նչ էղավ, թուղթ ու թեղ էրին, բանըմ կա»։ Պառավ լէ չգիներ թե էդի տղա է, թե ախչիկ է. ուրնե չըր էղի։

Լուսուն թագավորի կնիկ օր հ՚ելավ քնուց, մեկ լէ դրեց զչառին ճամբեց, ասեց.— Գնա տես իմա՞լ է իմ ախչիկ, էդ տղեն հավնե՞ր է իմ ախչկան, թը չ՚հավներ է։

Ջառեն օր էկավ, ղախչիկ տեսավ կոքվուկ, կոքվորուկ կանուկ է տախտի մեջ, շշկռավ մնաց, ասեց.— Էդ ի՞նչ է էղի։

Ախչիկ լէ օր տեսավ զզջառեն, քաշեց ըզփետ հ՚ընկավ ջառի հ՚ետևեն.

— Ըզքու ծամ կտրեմ, կիգաս էդա տեխ, կէրթաս գիմ ու զիմ իրկաց բամբասանք կէնիս իմ հոր ու մոր, օր տանեն կորցուն հա՞։ Ըզքզիկ, ըզհըմալ հերն ու մերն խուրպան էրեր իմ հըմալ իրկան. ըզքու օտք կկոտրիմ, հեղ մը լէ մտնիս հ՚ոդա։

Ջառեն անճախ օր փրթավ փախավ, գնաց թագավորի կնկան ասեց.— Գացի տեսա օր կոքվի, կոկճըվեր է քու ախչիկ, կաներ է տախտի մեջ։ Ասի, ախչի, իմա՞լ իս, դրա ես զիմ բերան չենք բացի, առավ ըզփետ հ՚ընկավ իմ հ՚ետև, ասեց՝ «Ըզքու ծամ կտրիմ. հ՚ըմնօր կիգաս էդա տեխ կէրթաս զիմ ու զիմ իրկա բամբասանք կէնիս իմ հորն ու մոր, օր տանին կորցուն հա՞, ըզքզիկ, հըմալ հերըն ու մեր օրական յոթ հեղ խուրպան կէնիմ իմ իրկան»։

Թագավորի կնիկ հ՚ելավ գնաց թագավորին ասեց.— Մա՛րդ, հ՚էսօր ճամբի զջառեն գնաց քու ախչկա խեչ, շատ ուրախ զուրախ էր էղի, լարեր էր ջառի հ՚ետև, ասեր էր՝ «Հեղ մը լէ հ՚իգաս էդա տեխ, զքու օտք կկոտրիմ. կիգաս էդա տեխ, կէրթաս զիմ ու զիմ իրկա բամբասանք կէնիս իմ հորն ու մոր»։ Ջըմ դինա, քու փեսեն է գացի ուր մոտ, ի՞նչ է էղի, հեղրմ կանչե ըի տեսնանք։

Թագավոր ճամբեց ըզփեսեն առավ գնաց։ Իքրամ աղատ, էլ

հրսապ չկեր մարդավարությյան, հարցուց թագավոր, ասեց.— — Կէղնի օր դու իմ ախչկան չէր հավներ, չէրթեր իմ ախչկա խեչ էն օրեր։

Տղեն վերուց ասեց.— Թագավոր ապրած, չգինաս թե ես պըզաիկ մարգում տղա եմ, օր կճամբեր կորցներ։ Ես Արևելոց թագավորի տղեն իմ, հար էսօր ինչ էղավ, էղավ, պետք է հորես բաց ընձիկ իղին իտաս, էրթամ հասնիմ իմ պապուն, հերք է էդա տեղրանք օլրտիմ։

Թագավորն ասեց.— Օր դու Արևելոց թագավորի տղեն իս, էլ մը կանի էդա տեղրանք։ Էկո քզիկ ձի բան իտամ, գնա հասի քու պապուն։ Հըմկա էն լէ ըխտիարցեր է, քզիկ կիշքե։

Հ'ելավ թագավորից բարմնա էղավ։

Թագավոր է, բեռոք բարձոք սանդանատով, բարխանով բերեց ճամբու դրեց։ Հալալաշմիշ էղավ փեսի ու ախչկա հետ, էնդոնք ընկան ճամբախ, գացին, թագավոր լէ դարձավ էկավ ուր տուն։

Տղեն է դիմավորավ պապու տուն ու ըզճամբախ տվեց հ'առեջ։

Գնաց պապու հողի մեջ հասավ, մոտեցավ քաղքին, զարկեց գչադրը ու նստավ։ Տեսավ էնգիեն տղեմ կիգեր զգերնդին դրեր էր վըր փեճին, կէրթեր քաղ։

Ասեց.— Տղա՛, տղա՛, դառձի գնա ձըր թագավորին ասե. «Քու տղեն օր կորեր էր, առեր է զուր կնիկ, էկեր է ֆլան տեղ զարկի զուր չադրը»։ Օր հըմալ անկջկլա իտաս, քզիկ բոլամա փարա կիտա։

Տղեն դառձավ էկավ, ասեց թագավորին.— Թագավոր ապրած, քու տղեն օր կորեր էր, առեր է զուր կնիկն, էկեր է քու հողի մեջ։ Ֆըլան տեխ զարկեր է զուր չադրը։

Տղեն էդ հըմալ օր ասեց, թագավոր էղավ աշխրքով, էլ ուր շապկի մեջ չսրթրեր։ Քաշեց զխազինեն դուրս, ինչքան օր տղեն կոներ տաներ, լցեց օսկի ու արծաթ։

Ասեց.— Տղա, դու գնա ապրի ու աղոթք էրե ընձիկ ու իմ տղին։

Ինք լէ հ'ելավ առավ զուր ասքյար, ինչքան մարդ կէր էդ քաղքի մեջ, դըհոլ ու զուռնեն էկավ տղի ու հարսի հ'առեջ։ Ձեռքըմ թալեց մեկ տղի վզով, մեկ լէ հարսին, պագեց ու դըհոլ զուռնով առավ գնաց ուր տուն։

Տղեն օր էկավ տուն, խըստու, մամուն հասկըցնելու համար, թե ինք տղա է, առավ ըզփառչ ձեռք, հ'ելավ գնաց դուրս օր ջուր թափեր։

Մերն հ՝ընկավ հ՝ետևեն գնաց, տեսավ օր տղա է, ասեց ինքն ուրին՝ «էդա իմ ախչկա ըռանկն է, բայց իմա՞լ է էղի, օր դառցեր է տղա, կարելի է աստծո՞ւց։ Ինչ օր կէղնի, թըղ էղնի, չէ օր ես աղատա էդ թագավորի ձեռքեն, իմ ախչիկ կէղնի, չէղնի ուր քեֆ գինա»։

Նոր հ՝ելավ թագավոր, բռնեց ղտղի հարսնիք, յոթն օր, յոթ գիշեր ղարկին ու խաղցան։ Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մուրազին։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր՝ մեկ ասողին, մեկ անկաճ էնողին, մեկ լէ ջաղամաթին։